# ՔԱՐՈԶ ԽՈՍԱԿԱՆ

## Տ. ԱՐՄԱՇ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(5 սեպտեմբերի 2004 թ.)

*«Մի երկնչիր հոտ փոքրիկ»:*

(Ղուկ. ԺԲ 32)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավատացյալներ, սիրելի ուխտավորներ Դամասկոսեն, այսօր անդրանիկ այս Պատարագիս և զորացած մեր ուխտավորներու աղոթքով, իմ հոգվույս առաջին պարտքը կհամարեմ իմ որդիական ջերմ սերը և հավատարմությունը հայտնելու ազգիս Հայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ իր հայրական գուրգուրանքով և իր հայրապետական օրհնությամբ արժանացանք այս պաշտոնին ու ծառայության և իր հոգատարությամբ և հրավերով ահա այսօր ուխտավորներով կգտնվինք Մայր Աթոռի մեջ՝ նորոգելու մեր ուխտը, թրծվելու Մայր Հայրենիքի հողին հետ և ստանալու օրհնությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

*«Մի երկնչիր հոտ փոքրիկ»:*

Ահա փոքրիկ հոտ է Դամասկոսի հայ գաղութը, բայց իր փոքրության մեջ կվառվի և կապրի Էջմիածնի օրհնությամբ, կվառվի, կգոյատեւ և իր ծառայությունը կբերե Էջմիածնի ներկայությամբ և այսօր որպես ուխտավոր եկած ենք Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ տալու մեր զորակցությունը, տալու մեր հավատարմությունը և միաժամանակ այստեղ զորանալով, հոգեպես ամրանալով, մեր սկզբունքներուն մեջ գոտեպնդվելով վերադառնալ և այնտեղ մեզի հետ տանել Վեհափառ Հայրապետի և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունները: Եթե փոքրիկ հոտ ենք, կապրինք Մայր Հայրենիքով, եթե փոքրիկ հոտ ենք, չենք երկնչիր Տիրոջ խոստումին համաձայն, կապրինք և կվառվինք Մայր Աթոռ Ս. Էջմիածնով:

Այսօր, սիրելի հավատացյալներ, մեզի հետ ուխտավորներ բերած ենք Դամասկոսի մեր եկեղեցիներ, ուր ամեն կիրակի տեղի հավատացյալներ իրենց աղոթքը կբարձրացնեն Դամասկոսի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցիեն, որուն Խորանին առջև ամեն երիտասարդ զույգ կյանքի խոստումով կմիանա, նույն Խորանեն, որուն առջև ամեն հայորդի մանուկ կստանա մկրտության դրոշմը, նույն Խորանին առջևեն, ուր ամեն հայորդի հրաժեշտ կառնի իր երկրավոր կյանքեն... բերած ենք իբրև արտահայտություն մեր հոգևոր կապի, իբրև արտահայտություն մեր զորակցության Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, մոմեր, որ այսօր ահա կվառենք Մայր Աթոռի աշտանակներուն մեջ՝ մեր աղոթքը միախառնելով ձեր աղոթքին և ձեր աղոթքի զորությունը մեզի հետ տանելով պանդուխտ երկիր՝ Սուրիո Հանրապետության մեջ մեր վայելած շրջանակներուն մեջ և ի Դամասկոս:

Այստեղ երբ կթրծվինք օրհնությամբ և կզորանանք Մայր Աթոռի փառքով, երբ կգոտեպնդվինք Ս. Էջմիածնի Միածնաէջ տեսիլքի լույսով, կվերադառնանք մեր տեղերը՝ այս ան-

զամ հսկակ, անաղարտ և բյուրեղյա հայելին դառնալու Մայր Հայրենիքի և Մայր Աթոռ Ս. Էջ-միածնի: Թող ամեն ոք, որ հաղորդվին մեզի հետ, ամեն ոք թող երբ տեսնեն մեզ կառչած մեր սկզբունքին, հավատարիմ մեր հեռանկարներուն, արմատապես զորացած մեր ավանդությամբ, թող մեր միջով հայելանան, և մեր միջով անոնք տեսնեն Մայր Հայրենիք և Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Եվ եթե ունինք այս օրհնությունը, եթե ունինք այս զորակցությունը, այն ժամանակ է, որ իսկապես կանդրադառնանք և հոգնելես կապրինք Տիրոջ այն խոսքը, Տիրոջ խոստումը, որ կըսե. «Մի երկնչիր հոտ փոքրիկ»:

Սիրելի հավատացյալներ, այսօր խումբ մը ուխտավորներով ծնկաչոք կաղոթենք Էջմիածնի Իջման Սուրբ Խորանին առջև և մեր հոգվո ուխտը կկատարենք՝ ստանալով օրհնությունը Մայր Աթոռի Ս. Էջմիածնի, լուսավորվելով միածնաէջ տեսիլքով, միախառնվելով հայրենիքի՝ մեր հայրերու դարավոր հողին, զորացած կվերադառնանք՝ մեր մեջ միշտ վառ պահելու սերը, հարգանքը, հավատարմությունը և զորակցությունը առ Հայրենիք և առ Մայր Աթոռ Ս. Էջմիածին: Ուրեմն, կերթանք մեր հոտը իբրև փոքրիկ հոտ, բայց հոտ, որ Տիրոջ պատգամով երբեք չի երկնչիր: Եվ ահա այս պատգամին և խոստումին վրան հիմնըված արժանի եղանք նաև մեր մեջ մարմնավորելու Տիրոջ խոստումը, որ կըսե՝ և անոնք պիտի ըլլան մեկ հոտ և մեկ հովիվ:

«Մի երկնչիր հոտ փոքրիկ»:

Ահա այս է պատգամը մեր Տիրոջ, զոր այսօր կառնենք այս սրբավայրեն և փառք կուտանք Աստծուն, որ արժանի դարձուց այստեղ ներկայանալու և աղոթքի կենալու Սուրբ Խորանին առջև: Եվ զոտեպնդված իր հրավերով, զոտեպնդված իր օրհնությամբ կվերադառնանք մեր ծառայության վայրերը և այնտեղ իսկ փառք տալու Տիրոջը, օրհնաբանելու, որովհետև միայն իրեն է, որ կվայելե փառքը, իշխանությունը և պատիվը հավիտյանս հավիտենից, ամեն.

***«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանսն. ամէն»:***